

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի տնօրեն,
բ.գ.թ. ՀԵՐԻՔՆԱԶ ՈՐՄԿԱՆՅԱՆ



ԿԱՐԾԻՔ

Հովհաննես Հովակիմի Հովակիմյանի «Վանո Սիրադեղյանի ստեղծագործությունը» թեկնածուական ատենախոսության մասին

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նորագույն գրականության բաժնի 15.06.2025 թ. նիստին մասնակցում էին բաժնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Աբրահամյանը, բան. գիտ. թեկնածուներ Լիլիթ Սեյրանյանը, Ս. Ավետիսյանը, կրտսեր գիտաշխատող Միհրան Հովհաննիսյանը:

Արտահայտվեցին՝ բան.գիտ.թեկնածուներ Լ. Սեյրանյանը, Ս. Ավետիսյանը, բ.գ.դ. Ս. Աբրահամյանը:

Նիստը վարում էր բաժնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Ս. Աբրահամյանը:

Հովհաննես Հովակիմյանի ուսումնասիրության նյութը Վանո Սիրադեղյանի գրական և հրապարակախոսական ժառանգությունն է, որ արդի հայ արձակի նախորդող պատմաշրջանն է և ունի գրապատմական առանձնահատկություններ, ինչը նորովի պետք է վերլուծվի (ինչպես նաև պետք է վերլուծվի վերջին տասնամյակների այնպիսի հակասական մի պետական-հասարակական գործչի, գրող Վանո Սիրադեղյանի կերպարը, որին ժամանակը դեռ չի գտել պատկերելու ոչ թե սահմանային, այլ իրական և պատմական գծերով):

1970-80-ական թվականների այս պատմաշրջանը, որքան էլ բարդ է գրական և հասարակական մտքի ներքին տեղաշարժերով, ստեղծագործական վերելքի մի պատմափուլ է, երբ հայ արձակը, հաղթահարելով 1950-ականների վերջի և 1960-ականների սկզբի գրական ճգնաժամը, որն արտահայտվեց Վ. Պետրոսյանի «Հավասարում բազմաթիվ անհայտներով» և Հրանտ Մաթևոսյանի «Այսպես կոչված գյուղագրության մասին» հոդվածների բանավիճող հակադրության մեջ, նրանցով

ձևավորելով նոր շրջանի հայ արձակի գրական ուղղությունները, որոնք հայտնի են իբրև քաղաքագիրների և գյուղագիրների բանավեճ,- ահա միմյանց ժխտող և հավելող գրական այս առանցքում ի հայտ եկավ գրական նոր սերունդ, որոնց անունների մեջ Վանո Սիրադեղյանի արձակը, ձևավորվելով 1970-80-ական թվականներին, գրապատմական նշանակություն ունեցավ (ոչ ավելին):

Ատենախոսը թեև գրական այս բանավեճին լուրջ նշանակություն չի տալիս, բայց վերլուծության իր տեսանկյունը հիմնում է այդ ուղղություններից մեկի դավանության՝ Հր. Մաթևոսյանի հայեցության, գրական կապի և ընդհանրությունների, «նմանության տարբերությունների» վրա՝ Վանո Սիրադեղյանին էլ համարելով Արովյանից Բակունց և Մաթևոսյան ժառանգորդական կապի վերջին օղակը, հետմաթևոսյանական շրջանի ամենաօժտված գրողը... որ, գուցե, սկսնակ վերլուծողի պատկերավոր մտքի հայեցություն է:

Այնուամենայնիվ, Վանո Սիրադեղյանի արձակի գրական արժեքի և առանձնահատկությունների բնույթը, դեռևս իր գրական մուտքի և առաջին՝ «Կիրակի» (1978) ժողովածուն հրապարակելիս մեկնաբանել է Հր. Մաթևոսյանը՝ ասելով. «Արձակի երկիր է մտել մի տղա, որ իր բոլոր նախորդներից ավելի ճշգրիտ՝ ճշգրիտ բառերով է ճշմարիտ պատմություններ պատմում, մոտավոր բառեր չունեն... ժլատ ու ընտրող էր, վրիպած բառ չունեն, նրա բառն ու առարկան իրարու նույն պահին էին գտնում... արդեն պատկեր ու կերպար դարձած ու անուն առած»:

Վանո Սիրադեղյանի արձակի այս գնահատությունը՝ սպառնիչ և ամփոփ, նույնն է և «Ծանր լույս» (1987), «Շատ չհամարվի» (1993), «Ձեռքդ ետ տար ցավի վրայից» (2000) ժողովածուների համար, որ ատենախոսը, մեջբերելով, գրապատմական ընթացքին զուգահեռ վերլուծում է՝ սկսած Վանո Սիրադեղյանի գրական մուտքից մինչև «Գյաղաների ժամանակը» (2011) գրքի հրապարակախոսական շրջանը: Ըստ այդմ Հովհաննես Հովակիմյանը նախընտրում է Վանո Սիրադեղյանի ժառանգության ժամանակագրական ներքին ընթացքի զարգացումը նկարագրելու վերլուծության մեթոդը, որ բաժանում է երկու շրջափուլի՝ առաջինին բնորոշ համարելով անհատի («փոքր մարդու»), ժամանակակից մարդու և հերոսի կերպավորման, նրա կեցության, կենցաղի, գաղափարի և գոյութենական ընկալումների խնդիրը՝ այն վերլուծելով «Կիրակի» պատմվածաշարի և «Ծանր լույս» վիպակի (իր բնորոշումն է) առանցքում, իսկ

երկրորդ շրջանը, ուր արտահայտվում է հեղինակի «Ձեռքդ ետ տար ցավի վրայից» վիպակում (ատենախոսի բնորոշումն է), ատենախոսի կարծիքով առաջին պլան են մղվում արդեն ոչ թե գյուղական կամ քաղաքային միջավայրը, բնությունը և մարդիկ, այլ, ինչպես ասում է ատենախոսը, տեղայնացված Հայաստանը, իր առանձին տարածքներով՝ քաղաքներ, գյուղեր, լեռներ, գետեր, ուր հեղինակը, էքսկուրս կատարելով Հայաստանի տարբեր վայրերով, այդ վայրերի մասին պատմական փաստեր և հայ ժողովրդի պատմության իրադարձություններ է հիշատակում, կերպավորում Հայաստանը կոնկրետ տարածական և հոգևոր միասնության կապի մեջ:

Կարելի է ասել, որ ատենախոսին հաջողվում է մեկնաբանության առանցքում տեսնել և վերլուծել պատճառահետևանքային այն կապը, որ Վանո Սիրադեղյանի ժառանգության մեջ կա ժամանակի հիմնախնդիրների և մարդու, նրան շրջապատող միջավայրի և տարածության միջև: Ատենախոսը, որքան էլ Վանո Սիրադեղյանին համարում է Հր. Մաթևոսյանի ռեալիստական դպրոցի հետևորդ, որի հերոսները շաղկապված են գյուղի, հայրենիքի և երկրի ճակատագրին, մանրամասնությամբ զգում են երկիրը և հայրենիքը, կերտում նրա փիլիսոփայությունը, օժտված են զգայականությամբ, ապրում են բնության շարժմանը համընթաց, ահա զաղափարական այս ընդհանրություններին զուգընթաց, տարբեր են Մաթևոսյանի և Սիրադեղյանի արձակը կերպարակերտման առումով: Այսինքն, ինչպես ասում է ատենախոսը, ընդհանրական առումով, Սիրադեղյանի արձակը, այսպես ասած, քաղաքագրական է, իրացված «գյուղագրության գրողական տեխնիկայով ու մոտեցումներով»: Շատ բարդ ու պարզ մի ըմբռնում, որ Մաթևոսյանը մեկնաբանել է այսպես. «Չկա գյուղագրություն կամ քաղաքագրություն. կա միայն մարդկային հայացք բնությանն ու աշխարհին» («Սպիտակ թղթի առջև», Երևան, 2004, էջ 44), ինչը նշանակում է, որ քաղաքագրություն և գյուղագրություն տերմիններն էլ են հնացած և փոխառված:

Հայեցության այս ըմբռնումը, որ պետք է քննել ներսից, գրական շարժմանը զուգընթաց, ատենախոսին հաջողվում է առանձին դրվագներում, մասնավորապես Սիրադեղյանի պատմվածքների կերպարների հոգեբանության, բնության հետ կապի մեկնաբանություններում «Կիրակի» և «Ծանր լույս» գրքերի առանձին պատմվածքներում, կարկամում է գրապատմական պրոցեսը նկարագրելիս, հիմնվում նախորդ շրջանի գրականագիտության մեկնաբանությունների վրա, ինչպիսին, օրինակ,

«1970-80-ական թվականների հայ արձակի թեմատիկ ուղղությունները և Վանո Սիրադեղյանի պատմվածքները»՝ ատենախոսության երկրորդ գլխում: Մինչդեռ ատենախոսի գրական պրոցեսի և քննադատության նախորդ շրջանի իմացությունը և վկայաբերումները, որոնք նկատելի են իր աշխատության մեջ, ոչ թե փաստը վկայելու, այլ որոշ հայեցողություններ վերանայելու կարիքն ունեն: Երկրորդ, որ քիչ ավելի կարևոր չէ: Վանո Սիրադեղյանի արձակի գնահատության հարցում, երբ Մաթևոսյանն ասում է, թե «արձակի երկիր է մտել մի տղա», նշանակում է մի բան. գրապատմական առումով ատենախոսը պետք է որոշեր Սիրադեղյանի տեղն ու դերը մի առումով. արդյո՞ք այնտեղ՝ «արձակի երկրում», Սիրադեղյանը իր տունն է հիմնել, մշտակա՞ն է այնտեղ, գրականությունը ճակատագի՞րն է իր, թե՞ ժամանակը կարճող ավազի հոսքը ծածկում է կամ ծածկելու է Սիրադեղյանի արձակի տանիքը...

Անշուշտ, ատենախոսը, առանձին գլուխներում մեկնաբանել է Սիրադեղյանի արձակի հիմնախնդիրները, անդրադարձել հեղինակի ստեղծագործության վերաբերյալ քննադատական հոդվածներին, քննել հեղինակի արձակը ձևի և բովանդակության համապատասխանության տեսակետից, բնութագրել Սիրադեղյանի երկերի գեղագիտական առանձնահատկությունները, քննել հեղինակի արձակի լեզվաոճական առանձնահատկությունները, վերլուծել Սիրադեղյանի հրապարակախոսությունը, մանրամասնել դրանք ատենախոսության առանձին գլուխներում՝ «Վանո Սիրադեղյանի գրական մուտքն ու արձագանքները», «Գյուղը և բնությունը իբրև գրական տարածություն», «Ժանրային իրացումները և պատկերակերտման առանձնահատկությունները», «Սիրադեղյանի արձակի լեզուն և ոճը իբրև ժամանակի վերստեղծման և կերպարակերտման միջոց», «Վանո Սիրադեղյանի հրապարակախոսությունը» և այլն:


Ատենախոսը յուրաքանչյուր գլխում առանձնացրել է Սիրադեղյանի ժառանգության մի հիմնախնդիր, վերլուծել գրական տեքստի և հեղինակի հայեցողյան միասնության և կապի մեջ, յուրաքանչյուր դեպքում հիմնավորել ասվածը: Բայց հիմնարար նորությունը, որ կա Սիրադեղյանի արձակի գրական ժառանգության մեջ, հեղինակի հրապարակախոսությունն է, որ ատենախոսի վերլուծության մեջ արդիական հնչեղություն ունի: Երեկվա հարցերի այսօրվա դիտարկումները դարաբաղյան շարժման առաջնորդների և անկախության, պետականաստեղծման գործիչներից մեկի

տեսանկյունից կարևոր են և հետաքրքիր, ինչը ատենախոսի աչքից չի վրիպել, մեկնաբանել է խորությամբ թե՛ Սիրադեղյանի ոճը, թե՛ աշխարհայեցությունը պատմական գուգահեռի վրա: Ահա ինչու ատենախոսը դարաբաղյան շարժումը քննել է Սիրադեղյանի աշխարհայեցության, պատմական շրջանի պատճառահետևանքային կապի, հրապարակախոսի լեզվի և ոճի առանձնահատկության համադրության տեսանկյունից, արժևորել այն նաև գեղարվեստական առումով, ինչը կարևոր է նաև գրապատմական առումով՝ բացահայտելով շարժումը աշխարհաքաղաքական, ներքին քաղաքական պայքարի և հոգևոր հայրենիքի գաղափարի տեսանկյունից:

Ինչ խոսք, Հովհաննես Հովակիմյանի աշխատանքը Սիրադեղյանի ժառանգության ուսումնասիրության տեսանկյունից ամբողջական է և գնահատելի: Ատենախոսության լեզուն պարզ է, ընթերցելի և չխճողված, որը մեզ հիմք է տալիս եզրակացնելու, որ Հովհաննես Հովակիմյանի «Վանո Սիրադեղյանի ստեղծագործությունը» ատենախոսությունը արժանի է Ժ.01.02 «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտության գծով բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, որի համար միջնորդում ենք ԵՊՀ բանասիրական ֆակուլտետում գործող մասնագիտական խորհրդի առջև:

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության

ինստիտուտի հայ նորագույն գրականության

բաժնի վարիչ՝ Բ.Գ.Դ., պրոֆ.  Սուրեն Աբրահամյան

Բ.Գ.Դ., պրոֆ. Ս. Աբրահամյանի ստորագրությունը հաստատում են՝
գիքարտուղար  Բ.Գ.Թ. Մարինե Սարգսյան